

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/3**

**24 փետրվարի 2015 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Իգիթ Թումանյանի 12.02.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 18.12.2014 թ-ի թիվ 354 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Իգիթ Թումանյանի գանգատում բերված փաստարկները.**

18.12.2014 թ-ին ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով անհատ ձեռնարկատեր Իգիթ Թումանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը ընդունել է թիվ 354 վարչական ակտը (որոշումը), որով որոշվել է Իգիթ Թումանյանից որպես պարտավորության գումար գանձել 371.400 ՀՀ դրամ:

Իգիթ Թումանյանը պատշաճ կարգով ծանուցված չի եղել վարչական վարույթի հարուցման մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Տվյալ դեպքում Իգիթ Թումանյանը պատշաճ կարգով չի ծանուցվել վարչական վարույթ հարուցելու մասին, ինչի հետևանքով զրկված է եղել վարչական վարույթի շրջանակներում իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու իրավունքից: Մասնավորապես, Իգիթ Թումանյանը զրկված է եղել վարչական վարույթին մասնակցելու, հարուցված վարչական վարույթի վերաբերյալ իր դիրքորոշումը, դրանք հիմնավորող ապացույցները ներկայացնելու, վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու, վարչական վարույթի նյութերին ծանոթանալու իրավունքից:

Նման պայմաններում հարուցված վարչական վարույթը և դրա արդյուքնում ընդունված վարչական ակտը չեն համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված և պաշտպանվող օրինականության սկզբունքին, ուստի ընդունված վարչական ակտը ենթակա է վերացման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ, 70-րդ, 72-րդ հոդվածներով՝ Ա/Ձ Իգիթ Թումանյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 18.12.2014 թ-ի թիվ 354 որոշումը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Իգիթ Թումանյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 17.12.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Իգիթ Թումանյանի չկատարված պատավորությունը պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով կազմում է 371.400 դրամ, որն առաջացել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն 2009 թ-ի հունվարից 2012 թ. դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված գումարներն օրենքով սահմանված ժամկետում չվճարելու և դրա հետևանքով նույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված տույժի գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու համար: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 18.12.2014 թ-ին ընդունվել է թիվ 354 որոշումը Ա/Ձ Իգիթ Թումանյանից 371.400 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Սոցիալական ապահովագրության վճարների գծով գանձման առաջադրված պարտավորությունների վերաբերյալ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Իգիթ Թումանյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ Ա/Ձ Իգիթ Թումանյանը պատշաճ կարգով չի ծանուցվել վարչական վարույթ հարուցելու մասին, ինչի հետևանքով զրկված է եղել վարչական վարույթի շրջանակներում իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու իրավունքից, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին,

Եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Իգիթ Թումանյանից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին գանգատաբերին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 18.12.2014 թ-ի թիվ 354 որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 18.12.2014 թ-ի թիվ 354 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**